| 8190 | 2.3. Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը՝ (տող 8191+տող 8196-տող 8193) | | 84 334 528,40 | 0,00 | 84 334 528,40 | 84 334 528,40 | 0,00 | 84 334 528,40 |
| | այդ թվում՝ | | | | | | | |
| 8191 | 2.3.1. Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ (տող 8194+տող 8195) | 932( | 59 843 171,30 | 59 843 171,30 | X | 59 843 171,30 | 59 843 171,30 | X |
| 8193 | - ենթակա է ուղղման համայնքի բյուջեի ֆոնդային մաս (տող 8191 - տող 8192) | | 59 843 171,30 | 59 843 171,30 | X | 59 843 171,30 | 59 843 171,30 | X |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8194 | 2.3.1.1. Համայնքի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդ՝ հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ | 932 | 59 843 171,30 | 59 843 171,30 | X | 59 843 171,30 | 59 843 171,30 | X |
| 8195 | 2.3.1.2. Համայնքի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդ՝ ձևավորված բացառապես նախորդ տարվա համայնքի բյուջեի | 932 | 0,00 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X |
| 8196 | 2.3.2. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի մնացորդ (տող 8197 + տող 8200) | 933 | 84 334 528,40 | 0,00 | 84 334 528,40 | 84 334 528,40 | 0,00 | 84 334 528,40 |
| | որից՝ | | | | | | | |
| 8197 | - առանց վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարի (տող | | 24 491 357,10 | X | 24 491 357,10 | 24 491 357,10 | X | 24 491 357,10 |
| | այդ թվում՝ | | | | | | | |
| 8198 | Համայնքի բյուջեի ֆոնդային մասի տարեսկիզբի ազատ մնացորդ՝ հաշվետվու տարվա հունվարի 1-ի դրությամբ | 933 | 24 491 357,10 | X | 24 491 357,10 | 24 491 357,10 | X | 24 491 357,10 |
| 8199 | Համայնքի բյուջեի ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդ՝ ձևավորված բացառապես նախորդ տարվա համայնքի բյուջեի ֆոնդային | 933 | 0,00 | X | 0,00 | 0,00 | X | 0,00 |
| 8200 | - վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարը (տող 8193) | | 59 843 171,30 | X | 59 843 171,30 | 59 843 171,30 | X | 59 843 171,30 |
| 8203 | 2.6. Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում (տող8000- տող 8110 - տող 8161 - տող 8170- տող 8190- տող 8201- տող | | 0,00 | 0,00 | 0,00 | -102 184 104,40 | -28 941 271,00 | -73 242 833,40 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ու Մ

10 ապրիլի 2020 թվականի N 27-Ն

**ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 97-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

**Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերն սահմանելու մասին» N97-Ն որոշման հավելված 1-ի 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **վաթսուն հազար դրամ**»:

**2.**ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերն սահմանելու մասին» N 97-Ն որոշման հավելված 1-ի 7-րդ կետի ա) ենթակետի 2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասը հազար մեկ դրամ** »:

3. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերն սահմանելու մասին» N97-Ն որոշման հավելված 1-ի 7-րդ կետի ա) ենթակետի 3-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասներեք հազար մեկ**»:

4. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերն սահմանելու մասին» N97-Ն որոշման հավելված 1-ի 7-րդ կետի ա) ենթակետի 4-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քսան հազար մեկ դրամ**»:

5. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերն սահմանելու մասին» N 97-Ն որոշման հավելված 1-ի 7-րդ կետի բ) ենթակետի 2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասը հազար մեկ դրամ**»:

6. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերն սահմանելու մասին» N 97-Ն որոշման հավելված 1-ի 7-րդ կետի բ) ենթակետի 3-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասներեք հազար մեկ դրամ**»:

7. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերն սահմանելու մասին» N 97-Ն որոշման հավելված 1-ի 7-րդ կետի բ) ենթակետի 4-րդ պարբերությունը խմբագրել և շարադրել նոր խմբագրությամբ՝

«- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **քսան հազար մեկ դրամ**»:

8. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներըն ու դրույքաչափերն սահմանելու մասին » N97-Ն որոշման հավելված 1-ի 14-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ»:

9. Սույն որշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

| ՀՀ | ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| | | 9 | Չկա | Չկա |
| 1 | Ավետիսյան Սամվել | [signature] | | |
| 2 | Բաղդասարյան Կարեն | [signature] | | |
| 3 | Բեգոյան Վահրամ | [signature] | | |
| 4 | Գալստյան Անդրանիկ | [signature] | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5 | Մարդոյան Սուսան | | | |
| 6 | Պողոսյան Արթուր | | | |
| 7 | Ռևազյան Հայկանուշ | | | |
| 8 | Սողոյան Էդուարդ | | | |
| 9 | Վելիցյան Նորիկ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2020 ապրիլի 10
ք. Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ապրիլի 2020 թվականի N 28-Ն

# 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրնքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով՝

**Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝**

1. Սահմանել 2020 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ՝ համաձայն հավելված 1-ի:
2.Սահմանել որոշումով նախատեսված արտոնությունների կիրառման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի ցանկը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարկմանը հաջորդող օրվանից:

| ՀՀ | ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| | | 9 | Չկա | Չկա |
| 1 | Ավետիսյան Սամվել | | | |
| 2 | Բաղդասարյան Կարեն | | | |
| 3 | Բեզոյան Վահրամ | | | |
| 4 | Գալստյան Անդրանիկ | | | |
| 5 | Մարդոյան Սուսան | | | |
| 6 | Պողոսյան Արթուր | | | |
| 7 | Ռևազյան Հայկանուշ | | | |
| 8 | Սողոյան Էդուարդ | | | |
| 9 | Վելիցյան Նորիկ | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020 ապրիլի 10
ք. Տաշիր

Հավելված1
ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու
2020 թվականի ապրիլի 10-ի N 28-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Տաշիր համայնքի ենթակայության ՀՈԱԿ-ների ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի 100%-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել՝
ա) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների երեխաների համար,
բ) երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար,
գ) հաշմանդամ երեխաների համար:
2. Տաշիր համայնքի ենթակայության ՀՈԱԿ-ների ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի 50%-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել՝
ա)միակողմանի ծնողազուրկ (մահացած ծնող ունեցող) երեխաների համար,
բ) միևնույն ընտանիքից երկու և ավելի միևնույն ՀՈԱԿ հաճախող երեխանրի համար:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ն. ՍՈՒԼՈՅԱՆ

Հավելված 2
ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու
2020 թվականի ապրիլի 10ի N 28-Ն որոշման

**ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ**

1.Միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար.
1)երեխայի ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումը, անձնագրի (նույնականացման քարտի) պատճենը,
2)երեխայի ծննդյան վկայականի պատճենը,
3)երեխայի ծնողի կամ ծնողների մահվան վկայականները:
2.«Հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող երեխաների համար.
1)երեխայի ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումը, անձնագրի (նույնականացման քարտի) պատճենը,
2)երեխայի ծննդյան վկայականի պատճենը,
3)Հայաստանի Հանրապետությունում բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից «Հաշմանդամ երեխա» կարգավիճակ սահմանելու մասին տեղեկանքը:
3.Ընտանիքի երեք և ավելի անչափահաս երեխաներից միևնույն ՀՈԱԿ հաճախող երեխաների համար՝
1)երեխայի ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումը, անձնագրի (նույնականացման քարտի) պատճենը,
2)երեխաների ծննդյան վկայականների պատճենները,
3)երեխաների ՀՈԱԿ հաճախելու մասին տեղեկանքը:
4.Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների երեխաների համար
1) երեխայի ծնողի կամ օրինական ներկայացուցչի դիմումը, անձնագրի (նույնականացման քարտի) պատճենը,
2)Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված ծնողի մահվան վկայականը,
3) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ հաշմանդամ դարձած ծնողի՝ իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամի կարգավիճակ սահմանելու մասին տեղեկանքը:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ն. ՍՈԼՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ապրիլի 2020 թվականի N 29-Ա

**«ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԱՂԲԱՎԱՅՐԻ ՑԱՆԿԱՊԱՏՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 25-րդ կետերով՝

**Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել «Միջհամայնքային համագործակցություն՝ աղբավայրի ցանկապատում» դրամաշնորհային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

| ՀՀ | ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| | | 9 | Չկա | Չկա |
| 1 | Ավետիսյան Սամվել | | | |
| 2 | Բաղդասարյան Կարեն | | | |
| 3 | Բեգոյան Վահրամ | | | |
| 4 | Գալստյան Անդրանիկ | | | |
| 5 | Մարդոյան Սուսան | | | |
| 6 | Պողոսյան Արթուր | | | |
| 7 | Ռևազյան Հայկանուշ | | | |
| 8 | Սողոյան Էդուարդ | | | |
| 9 | Վելիցյան Նորիկ | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020 ապրիլի 10
ք. Տաշիր

AUSTRIAN DEVELOPMENT COOPERATION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու
2020 թվականի ապրիլի 10-ի N 29-Ա որոշման

| Ա. Դիմումատու համայնք | |
|---|---|
| Համայնքի անվանումը▶ | Տաշիր ,Սարչապետ, Մեծավան |
| Համայնքի մեջ ընդգրկված բնակավայրերի թիվը▶ | 23 |
| Բնակչություն թիվը▶ | 16000 |
| ՏԻՄ-ի աշխատողների թիվը (առանց ՀՈԱԿ- ների)▶ | 102 Որից կին՝48 |
| Ավագանու անդամների թիվը▶ | 35 Որից կին՝5 |
| Համայնքի ղեկավարի անուն,ազգանունը▶ | Էդգար Արշակյան, Բորիս Բարոյան,Սերյոժա Վարդանյան |
| Հասցե (փողոց, քաղաք, փոստ. ինդեքս)▶ | Ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94, hayarpi.kirakosyan@bk.ru, 2101 |
| Հեռախոս▶ | (+374) 77-818568 |
| Էլ. փոստիհասցե▶ | tashir.lori@mta.gov.am |
| Կայքիհասցե (եթեանկա է)▶ | tashirciti.am |

| Բ. Կոնտակտային տվյալներ (եթե տարբեր է վերոնշյալից) | |
|---|---|
| Կոնտակտային անձ▶ | Հայարփի Կիրակոսյան |
| Կոնտակտային անձի պաշտոն▶ | Գնումների, ծրագրերի և տնտեսական զարգացման բաժնի գլխավոր մասնագետ |
| Էլ. փոստիհասցե▶ | hayarpi.kirakosyan@bk.ru |
| Հեռախոս▶ | (+374)77-818568 |

| Գ. Ենթադրամաշնորհներ | | |
|---|---|---|
| Ենթադրամաշնորհը, որի համար դիմում է համայնքը(նշել վանդակներից մեկը ✓): | ▶Համայնքային տարածքի վերանորոգում կամ բարելավ | ☐ |
| | ▶Ավագանու նիստերի ուղիղ առցանց հեռարձակում | ☐ |
| | | ✓ |

Յուրաքանչյուր դրամաշնորհի համար կկնքվի պայմանագիր.որտեղ կնշվեն պայմանները և կողմերի պարտավորությունները:
Առաջարկները պետք է ներկայացվեն դիմումի ձևում նշված առաջարկի կառուցվածքին համապատասխան՝ խստորեն հետևելով էջերի քանակի սահմանափակումներին:

## Դ.Ամփոփագիր (առավելագույնը 1 էջ)

Այս բաժնում խնդրում ենք ներկայացնել ծրագրի ամփոփումը, այդ թվում՝ հիմնահարցի հակիրճ ձևակերպումը, նպատակները և խնդիրները, նախատեսվող շահառուները, իրականացման ենթակա հիմնական միջոցառումները և ակնկալվող արդյունքները: Խորհուրդ է տրվում ամփոփագիրը պատրաստել վերջում՝ վստահ լինելու համար, որ ներառել եք բոլոր նշված կետերը:
▼

Համայնքների տարածքների ընդլայնման և ծառայություններից օգտվողների թվի ավելացման պատճառով **աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների արդյունավետ իրականացումը Տաշիր խոշորոցված համայնքում** հնարավոր է կազմակերպել միայն տարածաշրջանի համայնքների միավորման շնորհիվ, և հաշվի առնելով հարցի առաջնային լինելը և երեք խոշորացված համայնքների՝ Տաշիրի, Մեծավանի, Սարչապետի համաձայնությունը՝ ծրագրով նախատեսվում է կառուցել միջհամայնքային աղբավայր:

Ծրագրի նպատակն է ունենալ բարեկարգ և օրինական աղբավայր, նվազեցնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը, լուծել բնապահպանական խնդիրներ:
Ծրագրի ավարտին ակնկալում ենք ունենալ՝

1. 6 հա օրինական, ցանկապատված, բարեկարգ աղբավայր
2. Մաքուր, առողջարար շրջակա միջավայր
3. Աղտոտման նվազեցում 90% -ով (հարակից տարածքի)

Ծրագրի անմիջական օգտատերերն են Տաշիր, Մեծավան և Սարչապետ խոշորացված համայնքների ամբողջ բնակչությունը, սակայն հաշվի առնելով այն փաստը, որ երեք համայնքներից տղամարդկանց զգալի մասը մեկնում է արտագնա աշխատանքի՝ ծրագրի անմիջական շահառուները և հետագայում պահպանողները հանդիսանում են համայնքում բնակվող կանայք և երեխաները: Ծրագրին ավելի մասսայականություն հաղորդելու նպատակով կկազմակերպվեն լսումներ և կիրավիրվեն ժողովներ ներհամայնքային բոլոր բնակավայրերում:

Ծրագրի վերաբերյալ իրազեկվածությունն ապահովելու նպատակով կիրականացվեն հանրային լսումներ համայնքի կենտրոնում և բնակավայրերում, կտպագրվեն բուկլետներ, որոնք արդեն ձևավորված ակտիվ խմբի ներկայացուցիչների օգնությամբ կտարածվեն

բնակչության շրջանում, դրան զուգահեռ ծրագրի նպատակների և արդյունքների մասին բնակչությանը կտեղեկացվի կայքի և սոցիալական ցանցերի միջոցով:

Ծրագիրը այլ համայնքների համար կներկայացվի որպեզ լավագույն փորձ և կլինի օրինակելի:

Ծրագրի ընդհանուր արժեքն է 12.450.000 (տասներկու միլիոն չորս հարյուր հիսուն հազար ) ՀՀ դրամ, որից համայնքի ներդրումը կլինի 1.850.000(մեկ միլիոն ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը:

## Ե. Առաջարկվող ծրագրի նկարագրությունը(առավելագույնը 4 էջ՝ առանց հավելվածների)

1. **Հիմնահարցի ձևակերպում և հիմնավորում:** Ի՞նչ հիմնահարց եք հասցեագրում ձեր համայնքի համար: Ներկայացրեք կոնկրետ խնդիրը/հիմնահարցը(-երը), որը հասցեագրելու է առաջարկվող ծրագիրը և հիմնահարցի կարևորության հիմնավորում (օրինակ՝ քանակական/որակականապացույց, կարիքների գնահատում և այլն)

▼

Համայնքների ընդլայնված տարածքի և ծառայություններից օգտվողների թվի բազմակի ավելացման պատճառով **աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների արդյունավետ իրականացումը Տաշիր խոշորոցված համայնքում** հնարավոր է կազմակերպել միայն համատեղ ուժերով :Հաշվի առնելով բնակչության և տնտեսվարողների հաճախակի բողոքները ու համայնքների եռակողմ համաձայնությունը՝ ծրագրով նախատեսվում է կառուցել միջհամայնքային աղբավայր:Տաշիր, Մեծավան, Սարչապետ խոշորացված համայնքների տարածքում աղվբավայր առկա է միայն Տաշիր քաղաքում, սակայն վերջինս չունի համապատասխան պայմաններ 3 համայնքներ բնակավայրերին (3 խոշորացված համայնքում կա 23 բնակավայր) սպասարկելու համար: Աղբավայրը հարակից է մի շարք բնակավայրերի, անտառների, արոտավայրերի, վարելահողերի և միջպետական նշանակություն ունեցող Մ3 մայրուղուն: Ցանկապատման արդյունքում հնարավոր կլինի բացառել աղբի տարածումը նշված տարածքներում: Տարածաշրջանի 23 բնակավայր կունենան համապատասխան աղբավայր, որի շահառուներն են շուրջ 25.000 և ավել բնակիչներ; 10 հա և ավել արոտավայրերի սեփականատերերը, 10 և ավել մանր, միջին և խոշոր կաթ վերամշակող կազմակերպությունները, որոց համար կարևոր էմ թերել էկոլոգիապես մաքուր կաթ, ապրանքատեսականու որակական հատկանիշների և ստանդարտներին համապատասխանելու համար:

2. **Ծրագրի նպատակները,խնդիրները և ակնկալվող արդյունքները**:Նկարագրեք, թե կոնկրետ ինչ խնդիրներ է հասցեագրելու ծրագիրը, ինչպիսին է լինելու դրանց ազդեցությունը (ընդհանուր նպատակը) ,և ինչ արդյունքներ (հատուկնպատակներ) կարող ենք ակնկալել, մասնավորապես՝ ինչ ճանապարհով է ծրագիրը հասնելու նպատակին(-ներին):Ծրագրի նպատակները, խնդիրները և արդյունքները պետք է լինեն իրագործելի և չափելի:Հստակեցրեք, թե ինչպես են համայնքի անդամները մասնակցելու ծրագրի պլանավորմանը և իրականացմանը:

▼

Ծրագրի նպատակն է ունենալ բարեկարգ և օրինական աղբավայր, նվազեցնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը, լուծել բնապահպանական խնդիրներ:

Խնդիրներ՝

1. Աղբավայրի բացակայություն
2. Աղբի տարածում, բնության աղտոտում(10 հանավել)
3. Էկո համակարգի վնասում:

Ակնկալվող արդյունք՝

4. 6 հա օրինական, ցանկապատված, բարեկարգ աղբավայրի առկայություն
5. Մաքուր, առողջարար շրջակա միջավայր

3.Աղտոտման նվազեցում 90%(հարակից տարածքի)

3. **Նպատակներին հասնելու համար իրականացվելիք միջոցառումները:** Նկարագրեք այն միջոցառումները (քայլերը), որոնք նախատեսում եք իրականացնել վերը նշված յուրաքանչյուրնպատակինհասնելուհամար: Ներկայացրեք, թե ինչպես են համայնքի հիմնական շահագրգիռ կողմերը ներգրավվել ծրագրի առաջարկի մշակման գործընթացում:

▼

**Նպատակներին հասնելու համար իրականացվելիք միջոցառումներն են՝**

- Տարածքի հատկացում Տաշիր համայնքի կողմից
- Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում
- Գնումների գործընթացի կազմակերպում
- Շինարարական կազմակերպության հետ պայմանագրի կնքում:
- Աղբավայրի ցանկապատում:
- Շինարարական աշխատանքների ընդունում:

4. **Ծրագրի հնարավոր շահառուները:**Ներկայացրեք, թե ովքեր կօգտվեն առաջարկվող ծրագրի իրագործումից (նախատեսվող շահառուներ), բացատրելով, թեինչպիսին ենլինելու նրանցօգուտները: Հստակեցրեք, թե ինչպես են կանայք, երիտասարդները. խոցելի խմբերը օգտվելու ծրագրից:

▼

Ծրագիր շահառուներն են՝

- Տաշիր, Մեծավան, Սարչապետ խոշորացված համայնքների 23 բնակավայրի շուրջ 25.000 բնակիչներ, որոնք հնարավորություն կունենան բնակվել առողջ և մաքուր շրջակա միջավայրում
- Անտառի բարիքներից (սունկ, ազնվամորի, մասուր և այլն ) օգտվող կանայք, ովքեր ստիպված չեն լինի առնչվեու այնտեղ կուտակված աղբի հետ և հնարավորություն կունենան առողջ միջավայրում առողջ բարիքներից օգտվել
- Սպորտով զբաղվող երիտասարդների համար կստեղծվի առողջարար միջավայր
- Աղբավայրի հարակից տարածքներում արոտավայր և խոտհարքեր ունեցող սեփականատերերը:

Գենդերային հարցերի ընդգրկում և երիտասարդների ներգրավում.

Ծրագրի անմիջական օգտատերերն են Տաշիր խոշորացված համայնքի ամբողջ բնակչությունը, սակայն հաշվի առնելով այն փաստը,որ Տաշիրում արտագնա աշխատանքի մեկնող տղամարդիկ կազմում են բնակչության մոտ 60-70%- ը ՝ ծրագրի անմիջական շահառուները և հետագայում պահպանողները հանդիսանում են համայնքում բնակվող կանայք և երեխաները: Ծրագրին ավելի մասսայականություն հաղորդելու նպատակով կկազմակերպվեն լսումներ և կիրավիրվեն ժողովներ բոլոր բնակավայրերում:

5. **Ծրագրինորարարականմոտեցումը:** Նշեքն որ, մինչ այդ չկիրառված ինչ մոտեցումներ եք առաջարկում ներկայացված հիմնախնդիրը լուծելու համար:

▼

Ծրագրի իրականացմանն ուղղված միջոցառումների մասնակիցները և շահառուները հավասարապես բոլոր բնակավայրերի բնակիչներն են և որպես նորարար մոտեցում կկազմակերպվեն հետևյալ միջոցառումները՝

1. երեխաների և կանանց միջոցով կբարձրացվի իրազեկվածությունը բնակչության շրջանում,
2. ծրագրի ներկայացում համայնքի հանրությանը՝ համայնքի ժողովի ժամանակ,
3. համայնքի ակտիվ անդամների խմբի ձևավորում,
4. բաց դասեր դպրոցներում՝ քաղաքացու իրավունքները և պարտականությունները թեմայով,
5. «արոտավայրերն առանց աղբի» կարգախոսով իրազեկման արշավ:

6. **Ծրագրիկրկնելիությունը:**Նշեք, թե ինչպես ծրագրի իրականացումը կարող է օգտակար լինել այլ համայնքներին,ևինչպես եք այլ տեղական ինքնակառավարման մարմիններին իրազեկելու ծրագրի արդյունքների մասին:

▼

Ծառայության շարունակական և անխափան սպասարկումը և շահագործումը կիրականացվի արդեն իսկ առկա համայնքի ոչ առևտրային կազմակերպության՝ ՀՈԱԿ-ի կողմից: ՀՈԱԿ-ը ներկայումս հանդիսանում է Տաշիրի համայնքապետարանի ենթակայության կառույց և զբաղվում է քաղաքային տնտեսության սպասարկմամբ, աղբահանության կազմակերպմամբ և սանիտարական մաքրմամբ:
Ծրագրի վերաբերյալ իրազեկվածությունն ապահովելու նպատակով կիրականացվեն հանրային լսումներ համայնքի կենտրոնում և բնակավայրերում, կտպագրվեն բուկլետներ, որոնք արդեն ձևավորված ակտիվ խմբի ներկայացուցիչների օգնությամբ կտարածվեն բնակչության շրջանում, ինչպես նաև ծրագրի նպատակների և արդյունքների մասին բնակչությանը կտեղեկացվի կայքի և սոցիալական ցանցերի միջոցով:

Ծրագիրը կներկայացվի որպես լավագույն փորձ այլ համայնքների համար և կլինի օրինակելի:

7. **Ծրագրիկայունությունն ապահովելուն ուղղված քայլերը:**Նշեք, թե ինչ քայլեր եք նախաձեռնել ու ծրագրի ավարտից հետո արդյունքների կայունությունն ապահովելու համար:Ներկայացրեք, թե ինչ ցուցանիշներ (կատարողականության հիմնական ցուցանիշներ) եք օգտագործելու ծրագրի ազդեցությունը գնահատելու համար (արդյունքը և արդյունքի ցուցանիշները): Հնարավորության դեպքում ներկայացրեք ելակետային տվյալներ/տեղեկատվությունը:
▼

Ծրագրի կայունությունն ապահովելու համար աշխատանքների մեկնարկից առաջ կկզմավորվի աշխատանքների վերահսկման խումբ, որի անդամների շարքերում կլինեն համայնքի ավագանու անդամներ , համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ,համայնքի ակտիվ բնակիչներ, ՀԿ-ների ներկայացուցիչներ: Վերջիններս կհսկեն ծրագրի մեկնարկը և անխափան աշխատանքը, իսկ ավարտից հետո տարածքում կտեղադրվեն վահանակներ, կիրականացվի մոնիթորինգ յուրաքանչյուր եռամսյակ: Աղբավայրի հետագա մկաքրման և պահպանման գործողությունները տեղ կգտնեն համայնքի զարգացման ծրագրերում: Տեղադրված ցանցերի նպատակը աղտոտվածության մեղմումն է, իսկ համայնքին պատկանող տեխնիկական միջոցները կապահովեն ծրագրի կենսունակությունը:
Ծրագրի արդյունքը կգնահատվի աղբի տարածման մակերեսի կրճատմամբ և հարակից վարելահողեր և խոտհարքերի օգտատերերի ավելացմամբ:

8. **Ծրագրի բնապահպանական ազդեցությունը:**Նկարագրեք, թեծրագիրն ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ շրջակա միջավայրի վրա: Ինչպես էծրագիրըխրախուսելուտեսուրսարդյունավետությունը:
▼

Ծրագրի ավարտին ակնկալում ենք ունենալ հետևյալ բնապահպանական ազդեցությունները

- Բարեկարգ էկոմիջավայր:
- Մաքրված 10 հա և ավել արոտավայր:
- Մաքուր օդ
- Ապահովված կենսաբազմազանություն:
- Տուրիզմի և հանգստի բարեկարգ գոտիներ:
- Բնապահպանության տեսանկյունից վերանայված համյնքի զարգացման ծրագիր:
- Իրազեկված բնակչություն:

9. **Նախկին վերաբերելի փորձը:** Ներկայացրեք ՏԻՄ-իիրականացրած համայնքի մասնակցային զարգացման ծրագրի(-երի) նախկին փորձը՝ դերակատարներին, որոնք մասնակցել են պլանավորմանն ու իրականացմանը, ծրագրի(-երի) շահառուներին, ծրագրի իրականացմանշրջանակներումիրականացվածգործողությունները:

▼

Վերջին տարիների ընթացքում Տաշիրի համայնքապետարանը սեփական նախաձեռնությամբ և ուժերով մի շարք ծրագրեր է իրականացրել, այդ թվում՝ համայնքի կանաչապատման (ինչի շնորհիվ արժանացել է «Կանաչապատ համայնք 2015» տիտղոսին), լուսավորության ցանցի ընդլայնման, բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման, աղբահանության և այլն: 2014 թ-ի օգոստոսի 6-ին Տաշիրի քաղաքապետարանի և «Քեյր» միջազգային կազմակերպության միջև կնքվել է պայմանագիր՝ համայնքի կարիքները հոգալու նպատակով Բելառուս-82. Տրակտորի ձեռքբերման համար: Դրա համար «Քեյրը» վճարել է 8.384.500.00 (ութ միլիոն երեք հարյուր ութսունչորս հազար հինգ հարյուր ) ՀՀ դրամ, «Ստացողը»՝ 1.840.500.00(մեկ միլիոն ութ հարյուր քառասուն հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ: Ներկայում համայնքապետարանը անդամակցում է Հայաստանի էներգաարդյունավետ քաղաքների դաշինքին, որի նպատակը համայնքում ժամանակակից տեղեկատվության, էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործման , որակյալ էներգետիկ ծառայությունների մատուցման ծավալումն է: 2018 թ «Համայնքապետերը հանուն տնտեսական զարգացման » նախաձեռնության շրջանակներում Համաշխարհային բանկի կողմից արժանացել է գերազանց գնահատականի՝ տեղական տնտեսական զարգացման երկամյա պլանը մշակելու համար: Եվրոմիության հետ համատեղ իրականացվել է «Համայնքապետարան-հասարակություն կապի ամրապնդում՝ ի նպաստ տեղական ինքնակառավարման թափանցիկ գործելակերպի և հաշվետվողականության բարելավման» ծրագիրը, որի արժեքը կազմում է 3100,0 մլն ՀՀ դրամ:
Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների շրջանակներում 2018-2019թթ. իրականացվել են շուրջ 88400.0 մլն ՀՀ

դրամի ծրագրեր: 2019թ. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ համագործակցելով՝ իրականացվել է «Տաշիր խոշորացված համայնքի կոմունալ ծառայությունների բարելավում, աղբահանության կազմակերպում և ճանապարհների սպասարկում» ծրագիրը, որի ընդհանուր արժեքը 186,412,000(հարյուր ութսունվեց միլիոն չորս հարյուր տասներկու հազար) ՀՀ դրամ է:

## Զ. Բյուջեի նկարագիրը

Բյուջեն պետք է արտացոլի ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները: Բյուջեի նկարագիրը պետք է մանրամասներ ներկայացնի ձեռքբերվող ռեսուրսների տեսակների, միավոր արժեքների և գների հիմնավորման մասին: Այս դրամաշնորհով թույլատրելի ծախսերը կարող են ընդգրկել հետևյալները,բայց չսահմանափակվել դրանցով՝ ծրագրային ծախսեր, գրասենյակային սարքավորումներ, անձնակազմի և վարչական ծախսեր: Դիմումատուն պետք է հստակ հիմնավորի բոլոր ծախսերը, մասնավորապես՝ ծրագրի ազդեցության համատեքստում նշված ռեսուրսները գնելու անհրաժեշտությունը և գրասենյակի վարձակալությունը:

**Ծրագրայինծախսեր՝** ընդգրկում են ծրագրի պլանավորած գործողությունների հիմնական քայլերի իրականացման հետ փոխկապակցված ծախսերի տեսակները: Դրանք են՝ ծրագրի իրականացման ծախսերը, վերանորոգման ծախսերը, միջոցառումների, աշխատաժողովների, սեմինարների կազմակերպումը, տեղեկատվական նյութերի մշակումն ո տարածումը և այլն: Ծրագրի միջոցներով ստեղծված նյութերը՝ իրենց բովանդակությամբ, ձևով և լայն տարածումով պետք է լավ հիմնավորված և թիրախավորած լինեն:

**Սարքավորումներ/Կահույք՝** ընդգրկում է համակարգիչ, տպիչ և գրասենյակային այլ սարքավորումներ կամ կահույք գնելու կամ վարձակալելու ծախսերը:
Ծախսերը պետք է շատ լավ հիմնավորված լինեն ծրագրի արդյունավետության ընդհանուր համատեքստում:

**Անձնակազմ՝**ընդգրկում է լրիվ կամ կեսդրույքով աշխատակիցների և ծրագրում ներգրավված փորձագետների աշխատավարձերը:
Նրանք կարող են վարձատրվել բացառապես առաջարկվող ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների համար,
իսկ անձնակազմի բոլոր ծախսերը պետք է շատ լավ հիմնավորված լինեն:

**Վարչական ծախսերն՝**
ընդգրկում են ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ծախսերը,

օրինակ՝ կապ(հեռախոս, ֆաքս, ինտերնետ), կոմունալ ծախսեր ( էլեկտրաէներգիայի,ջրի մատակարարում և այլն) աիրատարակչություն/ պատճենահանում(թուղթ, ներկ, ծրարներ և այլն):Վարչական ծախսերը չպ ետք է գերազանցեն հայտավորած բյուջեի **10%-ը:**

**Խնդրում ենք նկատի առնել, որ Եվրոպայի խորհուրդի՝ ԵԽ-ի ընթացակարգեր իհամաձայն,ակնկալում է ծրագրի առնվազն 10%-ի չափով համաֆինանսավորում դիմումատու յուրաքանչյուր համայնքից:Համաֆինանսավորումըկարողէլինելդրամայինկամոչդրամային:**

**Է. Առաջարկիհավելվածներիցանկը**

**Ա) Բյուջեի նկարագիր** (օրինակը կցված է)
**Բ) Աշխատանքային պլան/Գանտի աղյուսակ** (օրինակըկցված է)
**Գ) Ներգրավվելիք աշխատակազմի անդամների ռեզյումեները**

**Բյուջեի ամբողջական առաջարկները կպատրաստվեն /կներկայացվեն այն ծրագրերի/ համայնքապետարանների կողմից, որոնց Լավագույն գործելակերպի ծրագրի Ղեկավար կոմիտեն կընտրի ֆինանսավորման համար:**

Ընտրող հանձնաժողովը գնահատելու է բոլոր առաջարկները հետևյալ **չափորոշիչներով՝**

1. Ծրագրի նկարագրություն............................................... ...................70%
2. Բյուջեի հիմնավորում..........................................................................20%
3. Շահագրգիռ կողմերի (կանայք, երիտասարդներ, խոցելիներ/աղքատներ) ներգրավումը ծրագրի առաջարկի մշակմանը, այդ թվում՝ ծրագրային և բյուջետավարման մասնակցային նախաձեռնությունների նախկին փորձը..........................................................................10%

Ծրագրի նկարագրության չափորոշիչներնեն՝

- Նույնականացված հիմնահարցի կարևորությունը համայնքի կարիքների համար (20%)
- Ծրագրի ազդեցությունը, այդ թվում՝ գենդերային ազդեցությունը, հասանելիությունը երիտասարդների, խոցելի և հաշմանդամություն ունեցող անձնաց համար, ազդեցությունը շրջակա միջավայրի վրա (20%)
- Ծրագրի կայունությունը/ շարունակելիությունը(10%)
- Նորարարական մոտեցում ծրագրի առաջարկում նշվածհիմնահարցին (10%)
- Ներկայացված ծրագրի կրկնելիությունն այլ համայնքերում իրականացնելու տեսանկյունից (10%)

**Խնդրում ենք դիմումները ներկայացնել՝**

Եվրոպայի խորհրդի գրասենյակ
Երևանում Վազգեն Սարգսյան փողոց 26/1, 6-րդհարկ
“Էրեբունի պլազա”բիզնես կենտրոն
Երևան 0010 Հայաստանի Հանրապետություն
tender.armenia-BH8603@coe.int

## Ը. Ստորագրություն

Լրացրեք ստորև աղյուսակը և ստորագրեք վերջին դաշտում

| | |
|---|---|
| Ստորագրողիազգանունը, անունը► | **Էդգար Արշակյան** |
| Ստորագրողիկոչումըկամ պաշտոնը► | **Տաշիր համայնքի ղեկավար** |
| Ստորագրմանվայրըևամսաթիվը► | **Վայր՝ ք. Տաշիր**<br>**Ամսաթիվ՝ 05.11.2019** |
| Դիմումատու համայնքի ստորագրություն և պաշտոնական կնիք► | **Տաշիր համայնքի ղեկավար՝ Է. Արշակյան**<br>**Մեծավան համայնքի ղեկավարի ժ/պ՝ Ա. Վարդանյան**<br>**Սարչապետ համայնքի ղեկավար՝ Բ. Բարոյան** |

<u>**ԳԱՂՏՆԻ**</u>

<u>**Գնահատման աղյուսակ**</u>

**Համայնքապետարան/անունը՝**
**Գնահատողի անունը՝**
**Գնահատման ամսաթիվը՝**

**Գնահատման չափանիշները**
▼

Առաջարկները գնահատվում են հետևյալ**չափորոշիչներով՝**

1. Ծրագրի նկարագրություն..........................................................................70%
2. Բյուջեի հիմնավորում...............................................................................20%
3. Շահագրգիռ կողմերի (կանայք, երիտասարդներ, խոցելիներ/աղքատներ) ներգրավումը ծրագրի առաջարկի մշակմանը, այդ թվում՝ ծրագրային և բյուջետավարման մասնակցային նախաձեռնությունների նախկին փորձը.............................................................................10%

Ծրագրի նկարագիրն ընդգրկում է հետևյալ չափանիշները՝

- Հիմնահարցի կարևորությունը համայնքի կարիքների համար (Վանդակ 1) (10%)
- Ծրագրի նպատակները, խնդիրները և ակնկալվող արդյունքները (Վանդակ 2) (15%)
- Նպատակներին հասնելու համար իրականացվող գործողությունները (Վանդակ 3) (5%)
- Նախատեսված շահառուներ (Վանդակ4) (10%)
- Նորարարական մոտեցում ծրագրի առաջարկում նշված հիմնահարցին (Վանդակ 5) (5%)
- Ներկայացված ծրագրի կրկնելիությունն այլ համայնքներում իրականացնելու տեսանկյունից (Վանդակ 6) (5%)
- Ծրագրի շարունակելիություն (Վանդակ 7) (10%)
- Ծրագրի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա(Վանդակ 8) (5%)
- Նախկին վերաբերելի փորձը (Վանդակ 9) (5%)

Յուրաքանչյուր չափանիշ գնահատվում են միավորներ՝ 1-ից 10-ը, որտեղ 1-ը վատ է, իսկ 10-ը՝ գերազանց:

| Ծրագրի նկարագրությունը | 10-ից տրվելիք միավորը | Կշիռը (նշված միավորումների %-ը) | Կշռվածգնահատականը(%) | Մեկնաբանություններ |
|---|---|---|---|---|
| Հիմնահարցի կարևորությունը համայնքի կարիքների համար(**Վանդակ 1**) | | 10% | | |
| Ծրագրի նպատակները, խնդիրները և ակնկալվող արդյունքները (**Վանդակ 2**) | | 15% | | |
| Նպատակներին հասնելու համար իրականացվող գործողությունները (**Վանդակ 3**) | | 5% | | |
| Նախատեսված շահառուներ (**Վանդակ 4**) (Նշում. Հարկավոր է հատուկ հղում անել համայնքում կանանցներ գրավմանը և համապատասխան արդյունքներին) | | 10% | | |
| Նորարարական մոտեցում ծրագրի առաջարկում նշված հիմնահարցին | | 5% | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| (Վանդակ5) | | | | |
| Ներկայացված ծրագրի կրկնելիությունն այլ համայնքներում իրականացնելու տեսանկյունից (**Վանդակ 6**) | | 5% | | |
| **Ծրագրի շարունակելիություն (Վանդակ7)** | | 10% | | |
| **Ծրագրիազդեցությունըշրջակամիջավայրիվրա (Վանդակ8)** | | 5% | | |
| **Նախկին վերաբերելի փորձը (Վանդակ9)** | | 5% | | |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ | | 70% | | |

**Բյուջեի հիմնավորումը (ընդհանուր գնահատականի20%)**

Ընդհանուր բյուջեի սուբյեկտիվդիտարկում:

- Դրամաշնորհի օգտագործումը (արդյո՞ք դրամաշնորհի ամբողջ գումարը ծախսման ենթակա է/կա՞ արդյոք լրացուցիչ ֆինանսական ներդրում համայնքապետարանի կողմից՝ գումարի անբավարար լինելու դեպքում)

▼

**Ծրագրի առաջարկի մշակման գործընթացում շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը (կանայք, երիտասարդներ, խոցելիներ/աղքատներ), ներառյալ մասնակցային ծրագրային և բյուջետային նախաձեռնությունների նախկին փորձը (ընդհանուր գնահատականի 10%)**

- Դիտարկում, թե ինչպես են համայնքները ներգրավվել հիմնախնդրի վերհանման և ծրագրի առաջարկի մշակման գործում (ներառյալ, թե ինչպե՞ս կարող է համայնքը բացահայտել հաջողությունը/արդյունքները)

| **Վերջնական ամփոփ գնահատականը** | | **Կշիռը (նշված միավորումների %-ը)** | **Հաջորդականությունը** |
|---|---|---|---|
| Ծրագրի նկարագրություն | | | |

| | | | |
|---|---|---|---|
| | | 70% | |
| Բյուջեի հիմնավորում | | 20% | |
| Շահագրգիռ կողմերի ներգրավում | | 10% | |
| | | 100% | |

**Ընդհանուր մեկնաբանություններ՝ Ղեկավար կոմիտեի համար**

Ընդհանուր մեկնաբանություններ՝ միտված Ղեկավար կոմիտեի ուշադրությանը

Անհրաժեշտության դեպքում, համառոտ մեկնաբանություններ՝ գնահատականները հիմնավորելու համար

▼

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

10 ապրիլի 2020 թվականի N 30-Ա

## «ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԱՌՑԱՆՑ ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 25-րդ կետերով՝

**Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել «Ավագանու նիստերի առցանց հեռարձակում» դրամաշնորհային ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

| ՀՀ | ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| | | 9 | Չկա | Չկա |
| 1 | Ավետիսյան Սամվել | | | |
| 2 | Բաղդասարյան Կարեն | | | |
| 3 | Բեգոյան Վահրամ | | | |
| 4 | Գալստյան Անդրանիկ | | | |
| 5 | Մարդոյան Սուսան | | | |
| 6 | Պողոսյան Արթուր | | | |
| 7 | Ռևազյան Հայկանուշ | | | |
| 8 | Սողոյան Էդուարդ | | | |
| 9 | Վելիջյան Նորիկ | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020 ապրիլի 10
ք. Տաշիր

AUSTRIAN DEVELOPMENT COOPERATION

COUNCIL OF EUROPE / CONSEIL DE L'EUROPE

**Հավելված**
**ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու**
**2020 թվականի ապրիլի 10-ի N 30-Ա որոշման**

## Ա. Դիմումատուհամայնք

| | |
|---|---|
| Համայնքի անվանումը▶ | Տաշիր |
| Համայնքի մեջ ընդգրկված բնակավայրերի թիվը▶ | 11 |
| Բնակչությունթիվը▶ | 16000 |
| ՏԻՄ-հաշխատողներիթիվը (առանց ՀՈԱԿ-ների)▶ | 45 Որից կին՝23 |
| Ավագանու անդամների թիվը▶ | 15 Որից կին՝ 2 |
| Համայնքիղեկավարիանուն,ազգանուն▶ | Էդգար Արշակյան |
| Հասցե (փողոց, քաղաք, փոստ. ինդեքս)▶ | Ք. Տաշիր, Վ. Սարգսյան 94, hayarpi.kirakosyan@bk.ru, 2101 |
| Հեռախոս▶ | (+374)-77-818568 |
| Էլ. փոստիհասցե▶ | tashir.lori@mta.gov.am |
| Կայքիհասցե (եթեառկա է)▶ | tashirciti.am |

## Բ. Կոնտակտայինտվյալներ (եթետարբերէվերոնշյալից)

| | |
|---|---|
| Կոնտակտայինանձ▶ | Հայարփի Կիրակոսյան |
| Կոնտակտայինանձի պաշտոն▶ | Գնումների, ծրագրերի և տնտեսական զարգացման բաժնի գլխավոր մասնագետ |
| Էլ. փոստիհասցե▶ | hayarpi.kirakosyan@bk.ru |
| Հեռախոս▶ | (+374)-77-818568 |

## Գ. Ենթադրամաշնորհներ

| | | |
|---|---|---|
| Ենթադրամաշնորհը, որի համար դիմում է համայնքը (նշել վանդակներից մեկը ✓): | ▶Համայնքային տարածքի վերանորոգում կամ բարելավում | ☐ |
| | ▶Ավագանու նիստերի ուղիղ առցանց հեռարձակում | ✓ |
| | ▶Միջհամայնքային համագործակցություն | ☐ |

Յուրաքանչյուր դրամաշնորհի համար կկնքվի պայմանագիր, որտեղ կնշվեն պայմանները և կողմերի պարտավորությունները: Առաջարկները պետք է ներկայացվեն դիմումի ձևում նշված առաջարկի կառուցվածքին համապատասխան՝ խստորեն հետևելով էջերի քանակի սահմանափակումներին:

## Դ.Ամփոփագիր (առավելագույնը 1 էջ)

Այս բաժնում խնդրում ենք ներկայացնել ծրագրի ամփոփումը, այդ թվում՝ հիմնահարցի հակիրճ ձևակերպումը, նպատակները և խնդիրները, նախատեսվող շահառուները, իրականացման ենթակա հիմնական միջոցառումները և ակնկալվող արդյունքները: Խորհուրդ է տրվում ամփոփագիր ըպատրաստել վերջում՝ վստահ լինելու համար, որ ներառել եք բոլոր նշված կետերը:
▼

Տաշիր համայնքը գտնվում է Հայաստանի հյուսիսային հատվածում՝ մայրաքաղաքից 163 կմ հեռավորության վրա՝ զբաղեցնում է 403.59 քմ տարածք:

**Քաղաքի միջով հոսում է Դեբեդ գետի վտակը հանդիսացող Տաշիր գետը:Տաշիրով է անցնում Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական մայրուղին, որն ունի ռազմավարական նշանակություն:** Տաշիր համայնքը գտնվում է ծովի մակերևույթից 1500 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն է, օդի հունվարյան միջին ջերմաստիճանը - 4,9 °C, հուլիսինը՝ 18-20 °C:Տարեկանթափվումեն 420 մմմթնոլորտային տեղումներ: Համայնքում ձմռան տևողությունը 170 օր է:
Տաշիր քաղաքային համայնքի մակերեսը 75. 09 կմ քառ. է, բնակչության թիվը՝ շուրջ 12 000: Գյուղատնտեսական նշանակությամբ հողերը կազմում են 5771,26 հա: Ջրային բալանսը 77, 34 հա է, որից լճերը՝ 9,76 հա: Համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից՝ 52 կմ է, մայրաքաղաքից՝ 160 կմ: Տնտեսության զարգացման միտում ունեցող ճյուղերը հողագործությունը, անասնապահութհունը և սննդի արդյունաբերությունն են: Տաշիրի շուրջ տասը՝ կաթի վերամշակման ձեռնարկություններ շարունակում են ոլորտի լավագույն ավանդույթները:
Ներկա դրությամբ ազգաբնակչության հետ անմիջական կապի միջոցները թույլ են, ոչ բավարար: Չնայած նախատեսված որոշակի միջոցառումներին, համայնքապետարանի գործողությունները, օրենքների փոփոխություններն ու ավագանու որոշումները բավարար կերպով հասանելի չեն հասարակությանը: ՏԻՄ գործունեությանը, օրենքներին, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներին, ինչպես նաև առաջարկվող ծրագրերին տեղեկանալը կնպաստի քաղաքացիական հասարակության կայունացմանը, մակարդակի և ակտիվության բարձրացմանը, որի արդյունքում կձևավորվի քաղաքացիների ավելի գիտակից զանգված՝ իրենց առաջարկություններով ու նոր գաղափարներով՝ ի նպաստ ժողովրդավարության զարգացման և սոցիալտնտեսական առաջընթացի: Ձեռք բերված համապատասխան միջոցների և իրականացված միջոցառումների շնորհիվ համայնքային կյանքին ակտիվորեն կներգրավվեն նաև երիտասարդները, տարեցները, հաշմանդամություն ունեցող անձինք : Լավագույն ստեղեկանալով համայնքի կենսագործունեությանը, քաղաքացիները ձեռք կբերեն պատասխանատվության զգացում, ինչն էլ դրական կանդրադառնա տեղական հարկերի և տուրքերի հավաքագրմանը: Առաջարկվող միջոցառումներն, անշուշտ, կնպաստեն տարածքային ռազմավարության թափանցիկության ապահովման, հաշվետու լինելուն և կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրերին: Իրականացված գործողություններից ակնկալվող արդյունքը կկազմի 40%:

Ծրագրի իրականացման հիմնական դժվարությունը մասսաների ակտիվության բարձրացումը և համայնքային կյանքին մասնակցություն ունենալու շահագրգռվածություն առաջացնելն է:

**Ե. Առաջարկվողծրագրինկարագրությունը(առավելագույնը4էջ՝ առանցհավելվածների)**

1. **Հիմնախնդրի ձևակերպում և հիմնավորում:** Ի՞նչ հիմնախնդիր եք հասցեագրում ձեր համայնքի համար: Ներկայացրեք կոնկրետ խնդիրը/հիմնախնդիրը(-երը), որոնք հասցեագրելու է առաջարկվող ծրագիրը և ներկայացրեք հիմնախնդրի կարևորության հիմնավորում (օրինակ՝ քանակական/որակական ապացույց, կարիքների գնահատում և այլն)

▼

Ներկա դրությամբ ազգաբնակչության հետ անմիջական կապի միջոցները թույլ են, ոչ բավարար: Չնայած նախատեսված որոշակի միջոցառումներին, համայնքապետարանի գործողությունները, օրենքների փոփոխություններն ու ավագանու որոշումները բավարար կերպով հասանելի չեն հասարակությանը: ՏԻՄ գործունեությանը, օրենքներին, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներին, ինչպես նաև առաջարկվող ծրագրերին տեղեկանալը կնպաստի քաղաքացիական հասարակության կայունացմանը, մակարդակի և ակտիվության բարձրացմանը, որ ի արդյունքում կձևավորվի քաղաքացիների ավելի գիտակից զանգված՝ իրենց առաջարկություններով ու նոր գաղափարներով՝ի նպաստ ժողովրդավարության զարգացման և սոցիալտնտեսական առաջընթացի: Ձեռք բերված համապատասխան միջոցների և իրականացված միջոցառումների շնորհիվ համայնքային կյանքին ակտիվորեն կներգրավվեն նաև երիտասարդները, տարեցները, հաշմանդամություն ունեցող անձինք : Լավագույնս տեղեկանալով համայնքի կենսագործունեությանը, քաղաքացիները ձեռք կբերեն պատասխանատվության զգացում, ինչն էլ դրական կանդրադառնա տեղական հարկերի և տուրքերի հավաքագրմանը: Առաջարկվող միջոցառումներն, անշուշտ, կնպաստեն տարածքային ռազմավարության թափանցիկության ապահովման, հաշվետու լինելուն և կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրերին:

2. **Ծրագրինպատակները,խնդիրներըևակնկալվողարդյունքները:**Նկարագրեք, թե կոնկրետ ինչ խնդիրներ է հասցեագրելու ծրագիրը, ինչպիսին է լինելու դրանց ազդեցությունը (ընդհանուր նպատակը),և ինչ արդյունքներ (հատուկնպատակներ) կարող ենք ակնկալել, մասնավորապես՝ ինչ ճանապարհով է ծրագիրը հասնելու նպատակին(-ներին):Ծրագրի նպատակները, խնդիրներըևարդյունքներըպետքէլինենիրագործելիևչափելի:Հստակեցրեք, թեինչպեսենհամայնքիանդամներըմասնակցելուծրագրիպլանավորմանըևիրականացմանը:

▼

Ծրագրի նպատակն է բարձրացնել համայնքապետարանի աշխատանքի թափանցիկությունը՝ խթանելով քաղաքացիների ներգրավվածությունը համայնքային կյանքին:

Խնդիրներ՝

- Համայնքի ավագանու խորհրդակցության և նիստի համապատասխան տարածքի ստեղծում
- Բարձրացնել քաղաքացիների իրազեկվածությունը համայնքային աշխատանքի վերաբերյալ
- Ապահովել տեխնիկական և գույքային միջոցներ՝ համայնքի բնակչություն, համայնքապետարան և համայնքի ավագանի կապի առավել սերտացնելու նպատակով:

Ակնկալվող արդյունքները՝

- Համայնքապետարանի գործունեության առավել թափանցիկ մեխանիզմ
- Իրազեկված հասարակություն

3. **Նպատակներին հասնելու համար իրականացվելիք միջոցառումները:** Նկարագրեք այն միջոցառումները (քայլերը), որոնք նախատեսում եք իրականացնել վերը նշված յուրաքանչյուր նպատակին հասնելու համար: Ներկայացրեք, թե ինչպես են համայնքի հիմնական շահագրգիռ կողմերը ներգրավվել ծրագրի առաջարկի մշակման գործընթացում:

▼

Միջոցառումները կիրականացվեն 2020թ. փետրվարիից օգոստոսին ընկած ժամանակահատվածում:
Նպատակներին հասնելու համար իրականացվելիք միջոցառումներն են՝
* Ծրագրի ներկայացում համայնքի հանրությանը՝ համայնքի ժողովի ժամանակ
* Համայնքի ակտիվ անդամների խմբի ձևավորում և վերապատրաստում՝ մասնակցության ձևերի վերաբերյալ
* Բաց դաս ավագ դպրոցում՝ քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները թեմայով:
* Գնումների գործընթացի կազմակերպում
* Գույքի և սարքավորումների տեղադրում
* Տեխսպասարկողների վերապատրաստում

Ծրագրի իրականացմանն ուղղված միջոցառումների մասնակիցները և շահառուները հավասարապես կլինեն կանայք, քանի որ համայնքում կանայք նույնպես ներգրավված են բոլոր ոլորտներում:

4. **Ծրագրի հնարավոր շահառուները:**Ներկայացրեք, թե ովքեր կօգտվեն առաջարկվողծրագրի իրագործումից (նախատեսվողշահառուներ), բացատրելով, թեինչպիսին ենլինելու նրանցօգուտները: Հստակեցրեք, թեինչպեսենկանայք, երիտասարդները, խոցելի խմբերը օգտվելուծրագրից:

▼

Ծրագիր շահառուներն են՝

- **15947 հոգի, այդ թվում կանայք՝** 8361 հոգի, երեխաներ՝2194 , հաշմանդամներ՝450:
- **15 ավագանու անդամները**
- **12 համայնքապետին կից խորհրդակցական մարմնի անդամները**

**Ծրագրին ավելի մասսայականություն հաղորդելու նպատակով կկազմակերպվեն լսումներ և ժողովներ բոլոր բնակավայրերում:**

5. **Ծրագրին որարարական մոտեցումը:** Նշեքնոր, մինչ այդ չկիրառված ինչ մոտեցումներ եք առաջարկում ներկայացվածհիմնախնդիրը լուծելու համար:
▼

Ծրագրի իրականացմանն ուղղված միջոցառումների մասնակիցները և շահառուները հավասարապես բոլոր բնակավայրերի բնակիչներն են և որպես նորարար մոտեցում կկազմակերպվեն հետևյալ միջոցառումները՝

* երեխաների և կանանց միջոցով կբարձրացվի իրազեկվածությունը բնակչության շրջանում
* Ծրագրի ներկայացում համայնքի հանրությանը՝ համայնքի ժողովի ժամանակ
* Համայնքի ակտիվ անդամների խմբի ձևավորում
* Բաց դասեր դպրոցներում՝ քաղաքացու իրավունքները և պարտականությունները թեմայով
:

6. **Ծրագրի կրկնելիությունը:**Նշեք, թե ինչպես ծրագրի իրականացումը կարող է օգտակար լինել այլ համայնքներին,և ինչպես եք այլ տեղական ինքնակառավարման մարմիններին իրազեկելու ծրագրի արդյունքների մասին:
▼

Ծրագրի իրագեկվածությունն ապահովելու նպատակով կիրականացվեն հանրային լսումներ համայնքի կենտրոնում և բնակավայրերում, կտպագրվեն բուկլետներ, որոնք արդեն ձևավորված ակտիվ խմբի ներկայացուցիչների օգնությամբ կտարածվեն բնակչության շրջաններում, ինչպես նաև ծրագրի նպատակների և արդյունքների մասին կտեղեկացվի բնակչությանը՝ կայքի և սոց. Ցանցերի միջոցով:

Ծրագիրը կներկայացվի որպես լավագույն փորձ այլ համայնքներում և կլինի օրինակելի:

7. **Ծրագրիկայունությունն ապահովելուն ուղղված քայլերը:**Նշեք, թե ինչ քայլեր եք նախաձեռնելուծրագրի ավարտից հետոարդյունքներիկայունություննապահովելու համար:Ներկայացրեք, թե ինչ ցուցանիշներ(կատարողականության հիմնական ցուցանիշներ) եք օգտագործելու ծրագրի ազդեցությունը գնահատելու համար (արդյունքը և արդյունքի ցուցանիշները): Հնարավորության դեպքում ներկայացրեք ելակետային տվյալներ/տեղեկատվությունը:

▼

Ծրագրի կայունությունն ապահովելու համար աշխատանքների մեկնարկից առաջ կկզմավորվի աշխատանքների վերահսկման խումբ, որի անդամների շարքերում կլինեն համայնքի ավագանու անդամների, համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ, ակտիվ համայնքաբնակներ, ՀԿ ներկայացուցիչներ: Վերջիններս կիսկեն ծրագրի մեկնարկը և անխափան աշխատանքը, իսկ ավարտից հետո կիրականացվի մոնիթորինգ ամեն եռամսյակ:Բացի այս,

8. **Ծրագրիբնապահպանականազդեցությունը:**Նկարագրեք, թեծրագիրն ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ շրջակա միջավայրի վրա: Ինչպես է ծրագիրը խրախուսելու ռեսուրսարդյունավետությունը:

▼

Ծրագրի բնապահպանական ազդեցությունը կլինի ակնհայտ ծրագրի ամբողջական իրականացման ժամանակ: Այժմ, երբ համայնքապետարանում չկան համապատասխան տեխնիկական միջոցներ, նեստերի առավել հասանելի տարբերակով կազմակերպման համար, համայնքապետարանը յուրաքանչյուր նիստի, ժողովի, քննարկման ժամանակ օգտագործում է բավարար քանակությամբ թուղթ՝համապատասխան նյութը շահառուներին մատուցելու համար, ուստի նոր սարքավորումների ձեռք բերումը կբերի և՛բնապահպանական, և՛ժամանակային, և՛տնտեսման հնարավորություն:

9. **Նախկին վերաբերելի փորձը:** Ներկայացրեք ՏԻՄ-իիրականացրած համայնքի մասնակցային զարգացման ծրագրի(-երի) նախկին փորձը՝ դերակատարներին, որոնք մասնակցել են պլանավորմանն ու իրականացմանը, ծրագրի(-երի) շահառուներին, ծրագրի իրականացման շրջանակներում իրականացված գործողությունները:

▼

Վերջին տարիների ընթացքում Տաշիրի համայնքապետարանը սեփական նախաձեռնությամբ և ուժերով մի շարք ծրագրեր է իրականացրել, այդ թվում՝ համայնքի կանաչապատման (ինչի շնորհիվ արժանացել է <<Կանաչապատ համայնք 2015>> տիտղոսին), լուսավորության ցանցի ընդլայնման, բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման, աղբահանության և այլն: 2014 թ-ի օգոստոսի 6-ին Տաշիրի քաղաքապետարանի և <<Քեյր>> միջազգային կազմակերպության միջև կնքվել է պայմանագիր՝ համայնքի կարիքները հոգալու նպատակով Բելառուս-82. Տրակտորի ձեռքբերման համար: Դրա համար <<Քեյրը>> վճարել է 8.384.500.00 դրամ, <<Ստացողը>>՝ 1.840.500.00 դրամ: Ներկայում համայնքապետարանը անդամակցում է Հայաստանի էներգաարդյունավետ քաղաքների դաշինքին, որի նպատակը համայնքում ժամանակակից տեղեկատվության, էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործման , որակյալ էներգետիկ ծառայությունների մատուցման ծավալումն է: 2018 թ <<Համայնքապետերը հանուն տնտեսական զարգացման >> նախաձեռնության շրջանակներում Համաշխարհային բանկի կողմից արժանացել է գերազանց գնահատականի՝ տեղական տնտեսական զարգացման երկամյա պլանը մշակելու համար: Եվրոմիության հետ համատեղ իրականացվել է <<Համայնքապետարան-հասարակություն կապի ամրապնդում՝ ի նպաստ տեղական ինքնակառավարման թափանցիկ գործելակերպի և հաշվետվողականության բարելավման>> ծրագիրը, որի արժեքը կազմում է 3100,0 մլն ՀՀ դրամ:
Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների շրջանակներում 2018-2019թթ. իրականացվել են շուրջ 88400.0 մլն ՀՀ դրամի ծրագրեր: 2019թ. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հետ համագործակցելով իրականացվել է <<Տաշիր խոշորացված համայնքի կոմունալ ծառայությունների բարելավում, աղբահանության կազմակերպում և ճանապարհների սպասարկում>> ծրագիրը, որի ընդհանուր արժեքը 186,412,000 ՀՀ դրամ է:

## Ջ. Բյուջեի նկարագիրը

Բյուջեն պետք է արտացոլի ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները: Բյուջեի նկարագիրը պետք է մանրամասներ ներկայացնի ձեռք բերելիք ռեսուրսների տեսակների, միավոր արժեքների և գների հիմնավորման մասին: Այս դրամաշնորհով թույլատրելի ծախսերը կարող են ընդգրկել հետևյալները, բայց չսահմանափակվել դրանցով՝ ծրագրային ծախսեր, գրասենյակային սարքավորումներ, անձնակազմի և վարչական ծախսեր: Դիմումատուն պետք է հստակ հիմնավորի բոլոր ծախսերը, մասնավորապես՝ ծրագրի ազդեցության համատեքստում նշված ռեսուրսները գնելու անհրաժեշտությունը և գրասենյակի վարձակալությունը:

**<u>Ծրագրայինծախսեր՝</u>**ընդգրկում են ծրագրի պլանավորած գործողությունների հիմնական քայլերի իրականացման հետ փոխկապակցված ծախսերի տեսակները: Դրանք են՝ծրագրի իրականացման ծախսերը, վերանորոգման ծախսերը, միջոցառումների, աշխատաժողովների, սեմինարների կազմակերպումը, տեղեկատվական նյութերի մշակումն ու տարածումը և այլն: Ծրագրի միջոցներով ստեղծված նյութերը՝ իրենց բովանդակությամբ, ձևով և լայն տարածումով·պետք է լավ հիմնավորված և թիրախավորած լինեն:

**<u>Սարքավորումներ/Կահույք</u>՝** ընդգրկում է համակարգիչ, տպիչ և գրասենյակային այլ սարքավորումներ կամ կահույք գնելու կամ վարձակալելու ծախսերը: Ծախսերը պետք է շատ լավ հիմնավորված լինեն ծրագրի արդյունավետության ընդհանուր համատեքստում:

**<u>Անձնակազմ՝</u>**ընդգրկում է լրիվ կամ կես դրույքով աշխատակիցների և ծրագրում ներգրավված փորձագետների աշխատավարձերը: Նրանք կարող են վարձատրվել ԲԱՑԱՌԱՊԵՍ առաջարկվող ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների համար, իսկ անձնակազմի բոլոր ծախսերը պետք է շատ լավ հիմնավորված լինեն:

**<u>Վարչականծախսերն</u>՝** ընդգրկում են ծրագրի իրականացման համարան հրաժեշտ ծախսերը, օրինակ՝ կապ (հեռախոս, ֆաքս, ինտերնետ), կոմունալ ծախսեր (էլեկտրաէներգիայի, ջրմատակարարում և այլն) և հրատարակչություն/պատճենահանում (թուղթ, ներկ, ծրարներ և այլն):Վարչական ծախսերը չպետք է գերազանցեն հայտավորած բյուջեի **10%-ը:**

**Խնդրում ենք նկատի առնել, որ Եվրոպայի խորհուրդը՝ ԵԽ-ի ընթացակարգերի համաձայն,ակնկալում է ծրագրի առնվազն 10%-ի չափով համաֆինանսավորում դիմումատու յուրաքանչյուր համայնքից:Համաֆինանսավորումը կարող է լինել դրամային կամ ոչ դրամային:**

## Է. Առաջարկի հավելվածների ցանկը

**Ա) Բյուջեի նկարագիր**(օրինակըկցվածէ)
**Բ) Աշխատանքային պլան/Գանտի աղյուսակ** (օրինակը կցված է)
**Գ) Ներգրավվելիք աշխատակազմի անդամների ռեզյումեները**

**Բյուջեի ամբողջական առաջարկները կպատրաստվեն/կներկայացվեն այն ծրագրերի/ համայնքապետարանների կողմից, որոնց Լավագույն գործելակերպի ծրագրի Ղեկավար կոմիտեն կընտրի ֆինանսավորման համար:**

Ընտրող հանձնաժողովը գնահատելու է բոլոր առաջարկները հետևյալ **չափորոշիչներով՝**

1. Ծրագրի նկարագրություն.........................................................................70%
2. Բյուջեի հիմնավորում............................................................................20%

3. Շահագրգիռ կողմերի (կանայք, երիտասարդներ, խոցելիներ/աղքատներ) ներգրավումը ծրագրի առաջարկի մշակմանը, այդ թվում՝ ծրագրային և բյուջետավարման մասնակցային նախաձեռնությունների նախկին փորձը………………………………………………………………10%

Ծրագրի նկարագրության չափորոշիչներն են՝

- Նույնականացված հիմնահարցի կարևորությունը համայնքի կարիքների համար (20%)
- Ծրագրի ազդեցությունը, այդ թվում՝ գենդերային ազդեցությունը, հասանելիությունը երիտասարդների, խոցելի և հաշմանդամություն ունեցող անձնաց համար, ազդեցությունը շրջակա միջավայրի վրա (20%)
- Ծրագրի կայունությունը/ շարունակելիությունը(10%)
- Նորարարական մոտեցում ծրագրի առաջարկում նշվածհիմնահարցին (10%)
- Ներկայացված ծրագրի կրկնելիությունն այլ համայնքերում իրականացնելու տեսանկյունից (10%)

**Խնդրում ենք դիմումները ներկայացնել՝**

Եվրոպայի խորհրդի գրասենյակ Երևանում
Վազգեն Սարգսյան փողոց 26/1, 6-րդ հարկ
“Էրեբունի պլազա”բիզնես կենտրոն
Երևան 0010 Հայաստանի Հանրապետություն
tender.armenia-BH8603@coe.int

Ը. Ստորագրություն

Լրացրեք ստոր և աղյուսակը և ստորագրեք վերջին դաշտում

| | |
|---|---|
| Ստորագրողի ազգանունը, անունը▶ | **Էդգար Արշակյան** |
| Ստորագրողի կոչումը կամ պաշտոնը▶ | **Տաշիր համայնքի ղեկավար** |
| Ստորագրման վայրը և ամսաթիվը▶ | **Վայր՝ ք. Տաշիր**<br>**Ամսաթիվ՝ 05.11.2019** |
| **Դիմումատու համայնքի ստորագրություն և պաշտոնական կնիք▶** | **Տաշիր համայնքի ղեկավար՝**<br>**Է. Արշակյան** |

ԳԱՂՏՆԻ

Գնահատման աղյուսակ

**Համայնքապետարան/անունը՝**
**Գնահատողի անունը՝**
**Գնահատման ամսաթիվը՝**

Գնահատման չափանիշները

Առաջարկները գնահատվում են հետևյալ **չափորոշիչներով՝**

1. **Ծրագրի նկարագրություն**.........................70%
2. Բյուջեի հիմնավորում.........................20%
3. Շահագրգիռ կողմերի (կանայք, երիտասարդներ, խոցելիներ/աղքատներ) ներգրավումը ծրագրի առաջարկի մշակմանը, այդ թվում՝ ծրագրային և բյուջետավարման մասնակցային նախաձեռնությունների նախկին փորձը.........................10%

Ծրագրի նկարագիրն ընդգրկում է հետևյալ չափանիշները՝

- Հիմնախնդրի կարևորությունը համայնքի կարիքների համար(Վանդակ 1) (10%)
- Ծրագրի նպատակները, խնդիրները և ակնկալվող արդյունքները (Վանդակ 2) (15%)
- Նպատակներին հասնելու համար իրականացվող գործողությունները (Վանդակ 3) (5%)
- Նախատեսված շահառուներ (Վանդակ4) (10%)
- Նորարարական մոտեցում ծրագրի առաջարկում նշված հիմնախնդրին (Վանդակ 5) (5%)
- Ներկայացված ծրագրի կրկնելիությունն այլ համայնքներում իրականացնելու տեսանկյունից (Վանդակ 6) (5%)
- Ծրագրի շարունակելիություն (Վանդակ 7) (10%)
- Ծրագրի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա (Վանդակ 8) (5%)
- Նախկին վերաբերելի փորձը (Վանդակ 9) (5%)

**Յուրաքանչյուր չափանիշի տրվում են միավորներ՝ 1-ից 10-ը, որտեղ 1-ըվատ է, իսկ 10-ը՝ գերազանց:**

| **Ծրագրի նկարագրությունը** | 10-ից տրվելիք | Կշիռը (նշված միավորումների | **Կշռված գնահատականը** (%) | **Մեկնաբանություններ** |
|---|---|---|---|---|

| | միավորը | %-ը) | | |
|---|---|---|---|---|
| Հիմնահարցի կարևորությունը համայնքի կարիքների համար (**Վանդակ1**) | | 10% | | |
| Ծրագրի **նպատակները, խնդի**րները և ակնկալվող արդյունքները (**Վանդակ 2**) | | 15% | | |
| Նպատակներին հասնելու համար իրականացվող գործողությունները (**Վանդակ 3**) | | 5% | | |
| Նախատեսված **շահառուներ (Վանդակ 4**) (Նշում. Հարկավոր է հատուկ հղում անել համայնքում կա**նանց ներգրավմանը** և համապատասխան արդյունքներին) | | 10% | | |
| Նորարարական **մոտեցում ծրագրի** առաջարկում նշված հիմնահարցին (**Վանդակ5**) | | 5% | | |
| **Ներկայացված Ծրագրի** կրկնելիությունն այլ համայնքներում իրականացնելու **տես**անկյունից (**Վանդակ 6**) | | 5% | | |
| Ծրագրի շարունակելիություն (**Վանդակ 7**) | | 10% | | |
| Ծրագրի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա (**Վանդակ 8**) | | 5% | | |
| Նախկին վերաբերելի փորձը(**Վանդակ9**) | | 5% | | |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ | | 70% | | |

### Բյուջեի հիմնավորումը (ընդհանուր գնահատականի20%)

Ընդհանուր բյուջեի սուբյեկտիվ դիտարկում:

- Դրամաշնորհի օգտագործումը (արդյո՞ք դրամաշնորհի ամբողջ գումարը ծախսման ենթակա է/կա՞ արդյոք Լրացուցիչ ֆինանսական ներդրում համայնքապետարանի կողմից՝ գումարի անբավարար լինելու դեպքում)

▼

### Ծրագրի առաջարկի մշակման գործընթացում շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը (կանայք, երիտասարդներ, խոցելիներ/աղքատներ), ներառյալ մասնակցային ծրագրային և բյուջետային նախաձեռնությունների նախկին փորձը (ընդհանուր գնահատականի 10%)

- Դիտարկում, թե ինչպես են համայնքներ ըներգրավվել հիմնահարցի վերհանման և ծրագրի առաջարկի մշակման գործում (ներառյալ, թե ինչպե՞ս կարող է համայնքը բացահայտել հաջողությունը/արդյունքները)

| Վերջնական ամփոփ գնահատականը | | Կշիռը (նշված միավորումների %-ը) | Հաջորդականությունը |
|---|---|---|---|
| Ծրագրի նկարագրություն | | 70% | |
| Բյուջեի հիմնավորում | | 20% | |
| Շահագրգիռ կողմերի ներգրավում | | 10% | |
| | | 100% | |

Ընդհանուր մեկնաբանություններ՝ Ղեկավար կոմիտեի համար

| Ընդհանուր մեկնաբանություններ՝ միտված Ղեկավար կոմիտեիուշադրությանը |
| --- |
| |

Անհրաժեշտության դեպքում, համառոտ մեկնաբանություններ՝ գնահատականները հիմնավորելու համար

▼

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ապրիլի 2020 թվականի N 31-Ա

## ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 92-րդ հոդվածի 4-րդ մասով՝

**Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝**

1. Թույլատրել բացել արտաբյուջետային հաշիվ «Ավագանու նիստերի ուղիղ, առցանց հեռարձակում» և «Միջհամայնքային համագործակցության՝ աղբավայրի ցանկապատում» դրամաշնորհային ծրագրերի համար միջազգային կազմակերպությունների կողմից ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքին հատկացվող դրամաշնորհները ստանալու նպատակով:

| ՀՀ | ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| | | 9 | Չկա | Չկա |
| 1 | Ավետիսյան Սամվել | | | |
| 2 | Բաղդասարյան Կարեն | | | |
| 3 | Բեգոյան Վահրամ | | | |
| 4 | Գալստյան Անդրանիկ | | | |
| 5 | Մարդոյան Սուսան | | | |
| 6 | Պողոսյան Արթուր | | | |
| 7 | Ռևազյան Հայկանուշ | | | |
| 8 | Սողոյան Էդուարդ | | | |
| 9 | Վելիջյան Նորիկ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2020 ապրիլի 10
ք. Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ապրիլի 2020 թվականի N 32-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 3-րդ կետով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրպետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասը օտարել աճուրդով և սահմանել մեկնարկային գինը՝ համաձայն հավելվածի:

| ՀՀ | ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| | | 9 | Չկա | Չկա |
| 1 | Ավետիսյան Սամվել | | | |
| 2 | Բաղդասարյան Կարեն | | | |
| 3 | Բեգոյան Վահրամ | | | |
| 4 | Գալստյան Անդրանիկ | | | |
| 5 | Մարդոյան Սուսան | | | |
| 6 | Պողոսյան Արթուր | | | |
| 7 | Ռևազյան Հայկանուշ | | | |
| 8 | Սողոյան Էդուարդ | | | |
| 9 | Վելիցյան Նորիկ | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020 ապրիլի 10
ք. Տաշիր

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու
2020 թվականի ապրիլի 10-ի N 32-Ա որոշման

*Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող աճուրդ վաճառքով օտարվող հողամասի մեկնարկային գինը ու պայմանները*

| Լոտ | Գտնվելու վայրը | Հողամասի ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գին /դրամ/ | Սահմանափակում |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տաշիր համայնք, գ. Սարատովկա, 4-րդ փողոց, թիվ 28 | 06-099-0025-0005 | 10000 | Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության | Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների | 1440000 | Չկա |
| 2 | Տաշիր համայնք, ք. Տաշիր, | 06-008-0319-0005 | 4159,6 | Գյուղատնտեսական | Արոտավայր | 446117 | Չկա |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ն. ՍՈԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ապրիլի 2020 թվականի N 33-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածով, 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, 94-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշումով հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝**

1"Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը մրցույթով՝ վարձակալության իրավունքով, տրամադրել օգտագործման:
2. Սահմանել հողամասերի վարձակալության վճարի մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

| ՀՀ | ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| | | 9 | Չկա | Չկա |
| 1 | Ավետիսյան Սամվել | | | |
| 2 | Բաղդասարյան Կարեն | | | |
| 3 | Բեգոյան Վահրամ | | | |
| 4 | Գալստյան Անդրանիկ | | | |
| 5 | Մարդոյան Սուսան | | | |
| 6 | Պողոսյան Արթուր | | | |
| 7 | Ռնազյան Հայկանուշ | | | |
| 8 | Սողոյան Էդուարդ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9 | Վելիցյան Նորիկ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2020 ապրիլի 10
ք. Տաշիր

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու
2020թ. ապրիլի 10-ի N 33-Ա որոշման

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասը մրցույթով, վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրվող հողամասի մեկնարկային վարձավճարի չափն ու պայմանները***

| N | Հողամասի գտնվելու վայրը | Հողամասի ծածկագիրը | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը | Հողամասի չափը (հա) | Վարձակալու-թյան ժամկետը (տարի) | Վարձավճարի մեկնարկային չափը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տաշիր համայնք, գ. Կաթնառատ լճակ | 06-053-0017-0036 | Ջրային | Ջրային | 0,58663 | 10 | 8447 |
| 2 | Տաշիր համայնք, գ. Կաթնառատ լճակ | 06-053-0017-0037 | Ջրային | Ջրային | 0,31829 | 10 | 4583 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ն. ՍՈԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ու Մ

10 ապրիլի 2020 թվականի N 34-Ա

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումը՝

**Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝**

1. Համայնքային սեփականություն հանդիսացող ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, 6-րդ թաղամաս, Գետափնյա փողոց թիվ 8/2 հասցեում գտնվող ինքնակամ կառուցված և համայնքային սեփականության իրավունքը ճանաչված 37,57քմ մակերեսով ավտոտնակը և դրա համար սահմանված կարգով առանձնացված բնակավայրի բնակելի կառուցապատման 44,2 քմ մակերեսով հողամասը ուղղակի վաճառքով օտարել ինքնակամ կառույցն իրականացնող Արթուր ՍեմյոնիՀովհաննիսյանին:

2. Պարտավորեցնել Արթուր Սեմյոնի Հովհաննիսյանին մուծելու հողամասի կադաստրային արժեքը, որը կազմում է 9810 (ինը հազար ութ հարյուր տասը) ՀՀ դրամ, ավտոտնակի վաճառքի արժեքը՝ 20660 (քսան հազար վեց հարյուր վաթսուն) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումից ծագող իրավական հարաբերությունները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

| ՀՀ | ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| | | 9 | Չկա | Չկա |
| 1 | Ավետիսյան Սամվել | | | |
| 2 | Բաղդասարյան Կարեն | | | |
| 3 | Բեգոյան Վահրամ | | | |
| 4 | Գալստյան Անդրանիկ | | | |
| 5 | Մարդոյան Սուսան | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6 | Պողոսյան Արթուր | | | |
| 7 | Ռևազյան Հայկանուշ | | | |
| 8 | Սողոյան Էդուարդ | | | |
| 9 | Վելիցյան Նորիկ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2020 ապրիլի 10
ք. Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ապրիլի 2020 թվականի N 35-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՆԱԻՐԱ ՄԵԼՍԻԿԻ ԱԶՈՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի բնակիչ Նաիրա Մելսիկի Ազոյանի դիմումը՝

**Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Թումանյան փողոց, 4-րդ թաղամաս, թիվ 16 հասցեի՝ ինքնաշեն վառարանի պայթյունի հետևանքով քանդված բնակելի տան վերանորոգման համար, որպես ֆինասական օգնություն, ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի բյուջեից տրամադրել 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

| ՀՀ | ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| | | 9 | Չկա | Չկա |
| 1 | Ավետիսյան Սամվել | | | |
| 2 | Բաղդասարյան Կարեն | | | |
| 3 | Բեգոյան Վահրամ | | | |
| 4 | Գալստյան Անդրանիկ | | | |
| 5 | Մարդոյան Սուսան | | | |
| 6 | Պողոսյան Արթուր | | | |
| 7 | Ռևազյան Հայկանուշ | | | |
| 8 | Սողոյան Էդուարդ | | | |
| 9 | Վելիցյան Նորիկ | | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020 ապրիլի 10
ք. Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ու Մ

10 ապրիլի 2020 թվականի N 36-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, Տաշիր համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 3-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

**Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝**

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:

| ՀՀ | ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| | | 9 | Չկա | Չկա |
| 1 | Ավետիսյան Սամվել | [signature] | | |
| 2 | Բաղդասարյան Կարեն | [signature] | | |
| 3 | Բեգոյան Վահրամ | [signature] | | |
| 4 | Գալստյան Անդրանիկ | [signature] | | |
| 5 | Մարդոյան Սուսան | [signature] | | |
| 6 | Պողոսյան Արթուր | [signature] | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7 | Ռևազյան Հայկանուշ | | | |
| 8 | Սողոյան Էդուարդ | | | |
| 9 | Վելիցյան Նորիկ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2020 ապրիլի 10
ք. Տաշիր

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու
2020 թվականի ապրիլի 10-ի N36-Ա որոշման

1) Տատյանա Պետրովնա Ռամանովա 10000/տասը հազար դրամ/, սոց.օգնություն,
(Անուն, ազգանուն,հայրանուն)

2) Լարիսա Ալեքսանդրի Սահակյան 10000/տասը հազար դրամ/, սոց.օգնություն,
(Անուն, ազգանուն,հայրանուն)

3) Նորա Կառլենի Ջուլակյան 10000/տասը հազար դրամ/, սոց.օգնություն,
(Անուն, ազգանուն,հայրանուն)

4) Մարտունի Գոգոյի Նասիբյան 15000/տասնհինգ հազար դրամ/, սոց.օգնություն,
(Անուն,ազգանուն,հայրանուն)

5) Եստեր Պարույրի Քոչարյան 20000/քսան հազար դրամ/, սոց.օգնություն,
(Անուն, ազգանուն,հայրանուն)

6) Արևիատ Վելիխանի Ֆահրադյան 20000/քսան հազար դրամ/, սոց.օգնություն,
(Անուն, ազգանուն,հայրանուն)

7) Քրիստինա Սերգեյի Սուլոևա 25000 /քսանհինգ հազար դրամ/, սոց.օգնություն:
(Անուն, ազգանուն,հայրանուն)

Ընդամենը՝ 110000 /մեկ հարյուր տասը հազար/

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ն. ՍՈԼՈՅԱՆ